



Հ. Ճ. ՍԻՐՈՒԽՆԻ

ԿՈՄԻՏԱՍԻՆ ՀԵՏ*

Փ
ԾԱԽԱՊԱՐՀ ԽԱՄՉԻ

I.—Զարաշուր մանգաղը

Զգուշ, ընթերցող: Հանե հողաթափերդ. Գողգոթա պիտի բարձրանանք: Հայոց պատմության այն ահավոր պահն է՝ երբ ամբողջ ժողովուրդ մը Գողգոթա ելավ խաչը ուսին: Եթե պիտի չկրնաս հուզումդ զսպել, մի՛ կարդար, ընթերցո՞ղ, դուն այս գլուխու մեռ եթե այնուամենախիվ փորձիս կարդալ այս դժնե զլուխը՝ զիացիր որ արցունքով է գըրված ան:

Ավա՞զ, կրթենն քաջ կնկատենք մնեն. զմեզ Կկարծենք թե պիտի կրնանք պալարյուն նայիլ երեկվան վրա, ու շհուզիլ զայն պատմած ատեն: Ի զոր կհավատանք թե տարիներուն հեա կսկիծները կանհետին, ու կմեղմանա սուզը: Պատրա՞նք: Անոնք միշտ գո են մեր հոգիներուն մեջ, ու օրվան հոգերն են որ մեզ կմոռցնեն պահ մը զանոնք: Հին օրերու աճյուներուն մեջ զեռ կապրին այնքան անուշ ու դառն վայրկյաններ, այնքան հույսեր ու հուսախարություններ, վերնլի ի բուռն ճիգեր ու փշուր-փշուր խորտակում թկթափներու, թողիչի: Ու մենք, միամիւս մարդիկ, պահ մը կարծեր ենք թե գերեզման ենք դրեր մեր բովանդակ երեկը: Վա՛յ քեզի եթե փորձես գերեզմանին կափարիշը վերցնել: Վա՛յ քեզի եթե ուղես խառնել հին օրե-

րու մոխիրը, անթեղված կայծ մը բավ է կըրկին բռնկցնելու հին հուզումները... *

* * *

Տեսանք թե ինչպես, 1915 ապրիլ 5/17-ին, ահավոր շարաթ մը կրացվեր հայ ժողովագրդի ճակատագրին մեջ, թե ինչպես անդոհանքով անցուցինք մենք այդ մոռայլ շարաթը, բն ինչպես լուսցավ շարաշուր առտուն, որ ապրիլ 11/24-ն է:

Կոմիտասներ կրածնվեինք առտուն՝ տն ամուր էր իր հոգեկան կորուլին մեց: Ալդաւէս ալ մնացեր էր ամբողջ օրը: Անմենուն շփոթած պահուն՝ ան իր ջիղերը ուժեղ կպահեր միշտ: Ան աշխատաելու տրամադրություն ունեցար էր նույնիսկ այդ օրը՝ տեղյակ ըլլալով հանդերձ որ վտանգը ման կուղա իր դուռներուն առչե այ:

Կոմիտաս նույնիսկ իր աշակերտներուն հետ պատարագի փորձ ըրեր էր ալդ օրը՝ Կանալ կիրակին կրկին անգամ երգելու համար զայն Ղալաթին եկեղեցին:

«Եւութը իշած էր և ամեն ոք կաճապարեր իր տեղը հասնիլ», կպատմե Միհրան Թուման: «...Խոկ անոնք որ Բերայի կողմերը կրնակեին, վարդապետին շուրջը բոլորված, խոսելով ու խնդալով կրածրանային Ղալաթիո զառիվերեն, դեպի թերա և Բանկալիի: Այդ շարաթ իրկունն էր որ Կոմիտաս վարդապետ իր աշակերտներուն «Բարի գիշեր» կմաղթեր և գոհունակ ու երջանիկ՝ իր տուններս կմտներ»:

* * *

Մայրարաղաքին մեջ դեռ վրդովված չէր մարդոց առօրյա կյանքը:

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1965 թվականի №№ Ա-ից, Ե-Ժ-ից, 1966 թվականի №№ Ա-Զ-ից, Բ-Ժ-ից, 1967 թվականի №№ Գ-Զ-ից և 1968 թվականի №№ Ա-Գ-ից:

ճիշտ միևնույն օրը, Զավեն պատրիարքին կայցելե գերման դեսպանատան պաշտոնյաներն մեկը, ողկա. Մորթման, որ պաշտոն ունի կապ պահպանելու հայոց պատրիարքարանի հետ: Եկած է առաջարկելու որ հայթուրք և գերման Հանձնաժողովներ լրկին գավառները սիրալիր կապեր ստեղծելու համար տարրերու միջն, ու այդ առաջարկը կուգար ընկել ճիշտ պահու մը երբ թուրք իշխանությունները ձերբակարություններ սկսելու վրա էին արդեն Պոլսու մեջ, ձերբակարություններ՝ որոնցմբ չէր կրնար լուր շունենալ իր մեծավորը, Վանդենհաւալ:

Ալլուր պատմած եմ, ընդարձակ, թէ ինչպես անցուցի ես այդ օրը, և ինչպես կրցա ճողովրի ճիվաղին ճանին: Ըսեմ այստեղ, Համառոտակի, թէ Կոմիտասեն բաժնվելու հետո շունչս խմբագրատուն առի, և պատմեցի ինչ որ լսեր էի: Ապա զացի Գյուղանեի ճիվանդանոցը, և օգտվելով ներումնեն որ շնորհված էր փախստական սպացուներուն՝ բժշկական քննության ներկայացաց: Բարբ-Ալիի պողոտային անցնելու՝ Վարդեսը տեսա որ դուրս կելեր Թալեսաթի քովեն, — որուն զացեր էր Թեոդիկի Համար բարեխոսելու, — անոր սպառնալիքներուն ատկ շշմած: Ան ևս կզգար թէ պայմենու վրա է փոթորիկը: Իրավալ, իրմէ Հապիկ բաժնված, իմանայի թէ արդեն չորս-հինգ հոգի ճիշտ ձերբակալած են օր ցորեկով Բարբ-Ալիի շրջականերու հայ գրատուններն և տպարաններն: Տնտեսու ատենը չէր ա՛լ: Ուղղակի Շավարշ Միսարյանին զացի, ու որոշեցինք հետքերնիս կորսնցնել: Պետք եղավ սակայն որ խմբագրատուն Հանդիպիմ, և իմացնեմ թէ ձերբակարություններն արդեն սկսած են: Քիշեր միայն լուրջի առին վտանգը, ու շարունակեցին տնտեսա: Մեկնելու քիշ հետո ոստիկանները խմբագրատունը կոխեր էին, ու առեր տարեր ով դաշեր էին:

Ոստիկանությունը այն գիշեր շգտավ զիս տունը: Բարի մարդիկ, — որոնցմբ մեկը կյանքիս ընկերը պիտի դառնար հետո, — այն իրկունք իրենց վար դիմն զիս, ու հանձնառու եղան ինձ ընկերանալ հաջորդ առտուն դեպի քաղաքեն գուրս, այնտեղ անցընելու համար օրը: Քաղաքին մեջ կրնային դրժրախտ բաներ պատահի:

Ու առտուն կանուխ փողոց կնեսվինք: Երբ Մեծ-փողոց կելլենք Հանրակառք առնելու համար զեպի Շիշլի՝ կտեսնեմ մեկը մեզի կվաղե հուզված: Կարապետ Թյուլպինանն է որ դիմացի Քյուրքյան դեղարանն կուգա հետապա.

— Փախեք, կպոռա, անհետացեք մեջտեսն: Գիշերը Կոմիտասը տարին տուննեն, քիշ մը անդիմ տուններն ալ ողկա: Պազիլյանը և դոկտ. Ալլահվերտին: Կըսեն թէ ուրիշ զեռ

շատեր բռնած են գիշերը:

Կնեսվինք հասած առաջին հանրակտորք, ու կերթանք օրը անցընել կուբային բաղը, հայոց գերեզմաննոցն քիշ անդին: Սարսափ մը պաշարած է մեզ: Չենք գիտեր ինչեր կրլան այդ պահուն բաղաքին մեջ, ու ինչ կրսական մեզ չոն:

Մութը կոփելու մոտ կդառնանք բաղաքը թողորք, ընկածված երեւութ մը ունին: Կվախնանք որևէ մեկուն մոտենալ ու բան մը հարցնել: Մարդոց գեմքերուն վրա գրված է արդեն ամեն ինչ՝ Պետք է որ շատ մարդ տարած ըլլան տուններն որպեսզի բոլորը այսպես լուս ու զիսիկոր բալեն, փորձելով իրենց հուզումը ծածկելու:

Կքալենք իրարմին բաժնված, ջանալով որ մեր բովեն անցնողները մեզ չնկատեն, մինչ որ կերպով մը մենք մեզ տուն նետենք:

Հպավի բաղաք մտած ենք՝ Հանկարծ բարեկամներու խոմքը մը կելլի մեր զեմքը: Կոմիտասի խումբին անցամներն են, բոլորն ալ կամ իրավաբանականնեն, կամ Կեդրոնականնեն ինձ դպրոցակից, — Վարդան Ագյուռլանը, Գորգեն էլմասյանը, Միհրան Փումաճանը, Հայկ Սևմերձյանը, և գեղ քանի մը ուրիշներ Կոմիտասի սաններն: Վերջեն իմացանք որ իրենցմեն Համարձակողներ եղեր են մինչև բանա երթալու և Կոմիտասի մասին հետաբրութելու:

Ճիս տեսնելուն՝ անոնցմեն մեկը կպոռա.

— Ծոլո՞ւ, քիշ հո՞ս ձգեր են:

Նշանացի կհասկցնեմ որպեսզի լուս, ու արագ մը կանցնիմ քովերնուն:

Այդ գիշերվանեն ա՛լ կպահվոտիմ: Ա՛հ, հիմա դուրին է ըսել թէ ա՛լ կպահվոտիմ: Կես դար հետո ալ զեռ սարսուու մը կճմի հողիս երբ կհիշեմ մղձավանցի այդ դժնդակ պահերը, բռնվելու սարսափը որ ամեն վայրկյան կփոթորկե քիշ, ու սե-սկ լուրեր որ ամեն օր խուցդ կմտնեն: Կրնա՞ս հուզումդ զսպել երբոր կիմանաս թէ դունեն դուռ տակավին մարդ կրփնտրեն, կամ վարագուցի ճեղքեն երբոր կտեսնես փողոցին անցնող ոստիկանները:

Ամեն վայրկյան գուժ մը կրերեն քեզի: Սիրտ ունեցիր ու դիմացիր երբոր քիշ բանն թէ երեք հարյուրն անցած է ձերբակալված մտավորականներուն թիվը ու անոնց մեջ բուրու մտերիմներդ կան:

Շաբաթներ կանցնին այսպես:

Այդ առաջին օրերուն, անոնք որ ծվարած են ինձ պես Հյուրդնկալ մեյ-մեկ հարկի տակ, յէհնք դգար զեռ աղետը իր ահավորության մեջ: Հարվածին ազգեցության տակ կշշմի, կշմարի մարդ: Պետք էր օրեր անցնեին, տարինե՞ր, որպեսզի զգայինք թէ ինչ պատահած էր, ինչպես խոդիսողված էր ծոլովուրդի մը բովանդակ կեսր:

Թաղը, ուր Կոմիտաս կբնակեր, Բանկալթին, ամենն հայաշատներեն մեկն էր Պոլսո թաղերուն։ Ան զարդուրանքով արթնցեր էր ապրի 25-ի կիրակի առուսն, որովհետև ամեն փողոց մարդ տարած էին։

Բանկալթի բռնած էին, օրինակ, Կոմիտասն զատ, Վարուժանն ու Ռուբեն Սևակը, Սարգիս Մինասյանն ու Արամ Անտոնյանը, դոկտ. Ալլահվերուին ու դոկտ. Նազարյանը, Հրաչյա Սուրբնյանն (Արմեն Տորյան) ու Գեղամ Բարսեղյանը, Ներսես Փափազյանն ու Բարսեղ Շահպազը, Շավարշ Քրիսյանն ու Արքահամ Հայրիկյանը, Աղեքսանդր Փանոսյանն ու Ենովք Հաւճնը, Խաչիկ հտարեճյանն ու Ժագ Սայապալյանը (Փայլակ), Արիս Խորայելյանն (Խորայել Տիգրունի) ու Կիկոն (Գրիգոր Թորոսյան), դոկտ. Հակոբ Թոփձյանն ու դոկտ. Պաղիլը, ու այս մտավորական մարդոց կողքին վաճառականներ ալ՝ Ռոստոմ Ռոստոմյանի, Վրթանես Մարտիկյանի, Նոյիկ Տեր-Սահմանյանի, Հովհաննես Թերլեմելյանի պես, Վարդան Գարակյոզյան քահանան, գեղագործ Հակոր Նարկիլեճյանը, և հասարակ մարդիկ ալ՝ ոմանք իրենց ոմեցած կապերուն համար կասկածելի դեմքերու հետ, ուրիշներ պարզապես թյուրիմացությամբ բերված։

Կոմիտասի ձերբակալությունը շշմեցուցեր էր թաղը։ Մարդ չկար որ զայն շճանչնար, մարդ չկար որ պաշտամունք չունենար գեպի ան։ Բայց ոչ ոք չէր համարձակեր անոր դուան մոտենալ այդ շարաշուր առոտուն։ Միակ հանդուրքն իր հայրենակից Կարո Ուշագլյանը կը լլաւ։ Ահա թե ինչ կպատմե ան։

«Պոլիս, 1915։ Ապրիլի առուու մը կանուխ կգտնվեի Բանկալթիի մեկ գեղարանը՝ բարեկամիս մոտ։ Ներս մտավ բժ. Ա. Նազարյան՝ գլխարաց և շփոթ։

— Տղաք, Կոմիտաս վարդապետը տարած են այս գիշեր։

Շշմած իրարու նայեցանք։ Ոչ մեկ նշանակություն կրցանք տալ եղածին։ Քիչ վերջ ուրիշներ եկան և սկսան թվել ուրիշ կալանավորներու անուններ, բոլորն ալ հանրածանոթ մտավորականներ։ Մեր զարմանքը վախի փոխվեցավ։ Վայրկյան մը ուղեցի երթալ վարդապետին բնակարանը, տեղեկություն առնելու համար, սակայն ետ կեցա, մտածելով որ կրնա հսկողության տակ ըլլալի։

Այդ միջոցին միտքս ինկան Մեհմետ էմին պեյր և Համտուլյան Սուլահին, երկուքն այ հիացողներ վարդապետին։ Առաջինը քանի մը անգամ տեսած էի վարդապետին մոտ, երբ եկած էր իր մեկ շափառ գրությունը եղանակավորել տալու (Է՞լ իյնեմ, տիք. ո՞վ ասեղս, կարե՛)։ Հոն ծանոթացած էինք իրա-

րու և այցետումսը տված էր ինձի որպեսպի իրեն այցելեմ։ Երկրորդը, Համտուլյան Սուլահին, տակավին ամիս մը առաջ, կարծեմ «Սապահ» թերթին մեջ գնահատական առղեր նվիրած էր վարդապետին, անոր թյուրք Զաղղիքի մեջ տված երածշտական մեկ դասախոսության առթիվ։ Ուրեմն մտածեցի հեռածայնել։ Պատասխանեցին թե Հ. Սուլահին հոն չէր, հետո Մեհմետ էմին պեյր կանչեցին։ Անոր տեղեկացուցի վարդապետին ձեր բակալությունը՝ խնդրելով որ միջամտեն։

— էֆենտիմ, ատիկա կառավարական գործ է, չենք կրնար որևէ միջամտություն կատարել. չեմ կարծեր որ ծանր պարագա մը կենա. թերեւ ազատ կարծակեն, ըսավ և գոցեց հեռախոսը»¹։

...Ո՞վ այն օրերու մեր միամտությունը։ Այնպես կարծեին մեզմեն շատերը թե իթթիհատի ծոցին մեջ, Թալեհաթի կողքին, լավերն ալ կային, ու այդ լավերուն մեջ էին, օրինակ, գրագետ Համտուլյան Սուլահին և բանաստեղծ Մեհմետ էմինը։ Մենք զանոնք երկուքն ալ ճանշցանք, ավաղ։ Համտուլյան Սուլահին ճանշցանք էինք երր կիսերծեր հայերը թուրք լեզուն աղավաղած ըլլալնուն համար, ու երբ օվասննա կկանչեր թուրանին. հետո զայն ճանշցանք երբոր թուրքեց էր իրեր թուրք գեսպան, այս անգամ արդեն Սուլահի թանրեռտի վերածված։ Ճիշտ է՝ հայեր ուներ իր շրջապատին մեջ, հայ եկեղեցին եկալ անոնցմեն մեկուն հարսնիքին, ու մասնակցեցավ հայ խնջույքներու, բայց իր խորքին մեջ մոլեռանդ թուրքն էր միշտ, ու իր գեսպանության օրերուն ծագումով թուրքեր կփնտրեն Ռումանիու մեջ որպեսզի թուրքիան շննցընելու դրկեւ հսկ Մեհմետ էմինը, ավելի կանուխն ճանշցած էինք մենք զայն, երբ Ազատամարտ հեածախեր իր քերթվածները կարդալու մեզի, երբ մեզ գովեր կը ներ Վարուժանին՝ զոր ճանշցած էր Մերաստիա, իր կուսակալության օրերուն. մենք էինք որ Կոմիտասի մեկ համերգին տարած էինք զայն առաջին անգամ, ու իր քերթվածները հայերենի թարգմանած էին Մեկ հանդեպ իր սուլոր ուրիալիր վարդկյաններուն ալ մոլեռանդ թուրք մո կմնար միշտ, ու միշտ կերպեր թուրանը. դեռ նոր, պատերազմի առաջին օրերուն, ան գովքն էր հյուսեր, ոչի թյուրք ուրանա («Ո՞ւ թուրք արթնցեր») խորագրով քերթվածի մը մեռ, թուրանին և իրմեր բխող ցեղերուն՝ որոնու դարձաւ պիտի համախմբվեին միակ մականի մը տակ։ Այդ քերթվածին մեջ ան կրսեր.

Ով իմ աղջու, հարուր միլիոն համրանքով Սարփ, Կովկասներ և Արցիաս

¹ «Արածանի», 1940, էջ 66—67։

Պիտի երբեք շվատեն թուրքը իր թուրք եկ-
բորսեն,
Քու օսմանդ, նազիրդ, քու հլխանդ, թա-
բերդ
Նղրայրական մեր ազգը նույն երացին
կտանին.
Միլիոն հաշվող այս ցեղին բոլոր սրտերն
հրավառ
Պիտի արոտին զերդ մեկ սիրա՞ սիրովն
համակ թքության
Հավատարիմ զըրդըներն ու քրտնաթոր
թաթարներ
Խիստ ակնարկով թունգուզներն ու մաջար-
ներ ժպտադեւ
Անապատներն պազ կամ տաք
Հեռվի, մոտի հողերեն
Կապույտ, կանաչ լիճերեն
Բարձունքներեն, ձորերեն
Հեղեղի պես պիտի զան՝ զահուդ գլուխ խո-
նարհեւ

Սույն Համտուլլա⁸ Սուլահին ու սույն Մեհ-
մետ էմի՞նը պիտի ուզեին Կոմիտասը վըր
կել իրենց երեց եղբորը՝ Թալեաթին ձան-
կեն...

Անոնք քար սրտով, ու թերես ալ հրձվան-
քով պետք է իմացած ըլլային որ գահիձը ի-
րենց բույներեն խլած կտանի Կոմիտասը.
Վարտամանը և բոլոր մյուսները... Բայց այդ
արգելք պիտի ըլլար որ նույն այդ Մեհմետ
էմինը դրվատական էջ մը հորինե 1935-ին,
Կոմիտասի մահվան զուժը առնելուն...

*

Կոմիտաս նույն այդ առառուն հանդիպում
պիտի ունենար իր աշակերտներուն հետ, ո-
րոնք պատարագի արարողությանց մասնակ-
ցել հետո Դալաթիո եկեղեցին մեջ՝ պնտի
գային իր մոտ: Ու իրավ ալ անոնցմն խումբ
մը, անտեղյակ զիշ՝ րվան պատահածներուն,
ձամփա կելլե դեւլի վարդապետին բնտկա-
րանը: Միհրան Թուաւան կպատմե թե
«գեռ մոտեցած չին Կոմիտասի տան, երբ
դիմացնին կելլե իրենց ընկերներեն մեկը,
որ առանց կանգ առնելու կիսիսա»

— Ծուտով տուներիդ զացեք: Հեռացեք:
իրարմէ զատվեցեք...:

Զհասկցան թե ինչո՞ւ...:

Արդեն հասած էին վարդապետին տանը
դուռը Զարկին զանգակը: «Վարպետը»—իր
ծառան—բացավ դուռը: Ալլալլավ կմկնաց.

— Խայր Սուրբ տարան...:

Աշակերտները քար կարեցան իրենց լգա-
ցած ցնցումեն: Եվ խոր հուզումով լսեցին իւն
ինչպես երկու պաշտոնյաներ ոստիկանի մը
հետ զիշերվան մութին դուռը զարկին: Ներս
եկան և հարգանքով հրավիրեցին Կոմիտաս
վարդապետը, որ բարի ըլլա հրամմել մուա-

կա պահականոցը մեկ քանի բացատրու-
թյուններու համար...:

— Խալի Սուրբ առան, ֆայթոն դրին ու
տարան, կրկներ Կոմիտաս վարդապետի
անձնվեր խոհարարը...»:

Աշակերտները, սարսափած իրենց հա-
ղորդված այր լուրեն, հանդգնությունը կու-
նենան գետի մոտակա պահականոցը երթա-
լու՝ տեղեկություն առնելու համար իրենց
վարդապետին մասին:

«Այսեղ բաղաբավարությամբ կը սկի ի-
րենց թե Կոմիտաս վարդապետը Պոլու բան-
տի հյուրանոցը կգանվի հիմա: Խակ իրենց
հարցումին, թե կրնա՞ն երթալ և զինքը տես-
նել, հեռուն նստած սև ակնցավոր մեկը
կտատախաննե:

— Հայ՝ հայ՝, էքենտիմ... ինչո՞ւ է...:

— Էսել է զուր Քոմիտաս էքենտիմ: աշա-
կերտներեն եք, հա՞...

— Մաշալլա՞ն... մաշալլա՞ն...

— Գացեք և ձեր խոճային հալը—հաթըրը
հարցուցեք...:

...Ու կորոշեն որ իրենց ընկերներեն՝ Հայ-
կըն ու կաղարցը—որ Պոլսոն կողմը կընա-
կեին—իրենց ճամփուն վրա, երթային կեղ-
րոնական բանտի հյուրանոցը և Կոմիտաս
վարդապետը տեսնեին և...

...Եվ երբ կմտնենան բանտի սահմաննե-
րուն, երկու ոստիկաններ կհարցնեն.

— Ո՞ւր կերթաք...

— Բանտ կերթանք մեր ուսուցիչը տեսնե-
լու...:

— Եկեք հետերնիս, կըսեն ու իրենց քով
կանգնած ուրիշ երիտասարդի մը հնատ, երե-
քը մեկ կտանին պահականոց: Կարգով դա-
նոնք կհարցագիրորդեն: Իրենց ընկերացող ե-
րիտասարդին հարցաքննությունը կիրկադի,
որովհետեւ թոթով ըլլալով՝ խոսածը հայիկ
կհասկցվեր: Մինչ այդ սենյակը կիոնվեր
որիշ ներկաներու, որոնք եկած էին նմանա-
պես իրենց սիրելիներուն ո՞ւր և ինչպե՞ս րլ-
լալը իմանալու: Այս երիտասարդին թոթովա-
խոսութենեն ցղագրգոված՝ ոստիկանապետ
կպոտուա.

— Տեֆ ըրեք սա ինքարաները: Այսուեղ
շոլուխ-շոնուխ տե՞ղ է... Դուրս նետնեցեք
սա փիները...:

Հրամանը իսկույն կգործադրվի»:

*

Արամ Անտոնյան, մեկը մեր այն մտավո-
րականներն որոնք աքսորի բոլոր զարհու-
րանքը հաշակել հետո, կրցան ողջ զառնալ
ետ, և մեղ պատմեցին իրենց ապրաւներեն
ու տեսածներեն, շատ նյութ տվակ հայ ժողո-
վուրդի մարտիրոսագրության դրվագներեն:
Ան մեկն եղավ անոնմե որ Թեհերյանի դա-

տավարության ատեն քստմնեցուցիչ պահեր պատմեցին թեղինի դատարանին առօկ ալ, և լույս աշխարհ՝ Հանեցին շատ բան եղեանի փաստաթուղթերեն Ան սկսակ գլեկ և տարարակի Փարիզի Արևմուտքին մեջ հոդվածներու շարք մը՝ «Կոմիտաս վարդս պետ աբուրի մեջ» խորագրով, առանց կարևոսակ սակայն զայն ավարտելու:

Լույս տեսած հոդվածներուն մեջ ան նախ դրվագներ կպատմե այն զույգ մը՝ որնքուն մասին, զոր Կոմիտաս և ձերբակալուած իր մյուս ընկերները անցուցին Պոլսո կեդրուական բանտին մեջ ապրիլ 24-ին՝ 25-ին՝ Արամ Անտոնյանի պատմածները շահեկան են մասնավանդ անով որ միակն են Կոմիտասի այդ երկու օրերուն մասին, մինչ իր արսորի կյանքին մասին շատ սվեր բան զիտենք՝ շնորհիվ իր վերապրող ընկերներեն ոմանց պատմած հուշերուն:

Ինչ որ բացառապես շահեկան է Անտոնյանի հուշերուն մեջ այն պարագան է որ Կոմիտաս անոնց մեջ կներկայանա իր հոգեկան բովանդակ կորովով, զղերով դեռ ամուր, և միշտ տրամադիր հեգնելու և կատակելու:

Անտոնյան նախ կակնարկե Կոմիտասի ձերբակալության.

«Բանկալթի շրջանակը գործող զաղտնի ոստիկանները տեղյակ էին անշուշտ Կոմիտասի սովորություններուն և գիտեին որ կանուխ տուն կդառնար: Զինքը ձերբակալեր էին առանց երկար սպասումներու և զույգությանց, ինչպես պարտավորվեցան ընել մեղմեց շատերուն համար որ գիշերվան մեծ մասը դուրս կանցընեինք մեր զբաղումներուն բերմունքով: Եվ արդեն մենք տարբեր բարեի տեր մարդիկ էինք, քան տարաբախտ վարդապետը, որ ոչ մեկ մտավախություն կներշնչեր իրենց: Կոմիտասի ձերբակալությունը, ինչպես առհասարակ այդ գիշերվան բոլոր ձերբակալությունները, աչքի չեր զարկած, և շգիտցանք բնակ թե ինչ պայմաններու մեջ տեղի ունեցած է:

Շուտով իմացանք թե եկեղեցականներ ալ կան ձերբակալվածներուն մեջ, և այդ առթիւ մեղի տվին Կոմիտաս վարդապետի անունը: Իրոք կանուխ բերված էր բանտ, և Սյուպիան Մեքթեպի առաջնորդված: Վերջեն պիտի իմանալինք թե իր ձերբակալութենեն առաջին տեղեկություն ունեցողը եղեր է դոկտ. Ավատիս Նազարյան, որ վարդապետին դրաշի էր, բայց ոչ նույն գիշերը, այլ հաջորդ կիրակի առատուն: Կոմիտաս վանեցի սպասավոր մը ուներ, Կարապեա վարպետը, որ վարդապետին տարվելեն ետք ամբողջ գիշերը կը սպասե անոր վերադարձին: Առառու կանուխ, տեսնելով որ Կոմիտաս դեռ չէ դարձաւ,

կփութա դոկտ. Նազարյանի տունը, գրեթե հեալով, և այնքան հուզված, որ ամբողջ վայրիյան մը չի կրնար բառ մը արտասանել: Դոկտորը կկարծե թե Կոմիտաս հանկարծական տկարություն մը ունեցած է և իսկույն կակսի հագվիլ աճապարանքով: Վերջապես Կարապետ կհաջողի խոսիլ ու կըսի ողբագին շեշտով մը:

— Տարան, Տոքթոր, տարան...

— Տոն, ինչ տարան:

— Հայր սըր տարան:

— Տոն այ տղա, ո՞վ տարավ:

— Թոլիսներ տարան, զիշեր տարան:

Նազարյան որուն բոլորովին անհավատալի կթվի վարդապետին ձերբակալությունը, կպատրաստվի զուրս ելեկ, մինչն թաղին պահականոցը երթալ և Կոմիտասը փնտրել, բայց ժամանակ չընմենար, որովհետեւ քիլ ետքը ինքն ալ կձերբակալվի»:

Կոմիտաս այսպես ինկավ դահճճին ձանկը:

II.—Կեղրոնական բանտին մեջ

Մեծ մասամբ պահականոց պահականոց պատացուցին նախ զիշերը ձերբակալվածները. Կոմիտասը կթվի թե ուղղակի կեղրոնական բանտ տարին, ու նետեցին Սյուպիաններու խովուշը:

Հիմա այլևս խոսքը Արամ Անտոնյանին տանքք.

«Ոչինչ անսովոր Կոմիտասի երկույթին մեջ իր համբավակիր «Քերթենքելե»-ն բերանն էր միշտ, ինչ որ անշուշտ լավ նշան էր, և զայն առատորին կրաշխեր աչ ու ձախ, երբ իր կրակոտ ու հեգնությամբ հորդուն նայվածքը, որ անընդհատ մեկն մյուսը կոստուտեր, հանկարծ մտերիմ գեմքի մը վրա կը հանգչեր.

— Գո՞ւմ ալ, ֆերբենքելե... եվ կամ՝

— Զիրցա՞ր քարի մը տակ սովորակի ու պրծիլ, այ քերթենքելե...

Անշուշտ լավ գիշեր մը չեր անցուցեր Սյուպիան Մեքթեպի տակավին խոնավ տախտակամածին վրա: Բայց իր սովորական մահական ալ փայտ մըն էր լոկ, նրբին սավանով մը ծածկված, և չեր սիրեր կակու անկողնի մեջ պառկիլ: Քի, նեղերը էր գիշերը, և այն ալ բազմութենեն, մանավանդ սիկարեթներու ծուխեն, որ պարզապես կրղայնացներ զինքը:

Երբ մեր մոտ եկավ, իր վիճակին վրա չէր խորհներ. կամ գոնե ներքին վրդովում մը մատնող բառ մը շարտասանեց: Ինչպես ուրիշ շատեր, ինք ալ հույս ուներ թե այս կատակը, — բառը իրն է, — երկար չի տևեր, և թե պատրիարքն ու Ազգ, Վարչությունը, օսմանյան երեսփոխանական ժողովի աղդեցիկ

⁷ «Արևոտք», Փարիս, 1946, թիվ 5 և 6.

հայ անդամներուն, ի հարկին նաև օտար դեսպանատուններու միջնորդությամբ, կհաշողին վերջ տալ անոր:

Եվ անշուշտ այդ հույսով լցցված ըլլալուն համար էր որ ինդալով կնկարագրեր այն հուսարեկ և հոռեանս վիճակը որուն ենթարկված տեսներ էր զիշերը իրեն հետ անցուցած քանի մը հայտնի անձնավորություններ, մասնավորաբար զոկա:

— Լավս էր, կըսեր զարժացմամբ, անոր ակնարկելով:

Քիչ վերջը, դոկտ. Թորոգոմյան, որ մեղի միացեր էր, պատմեց թե արդարի ամերող զիշերը լալով անցուցեր էր և թե վարդապետը շատ ջանացեր էր զինքը մխիթարելու:

— Եթե Կոմիտասի քաջալերանը ըլլար, գուցե նվազեի, ըսավ բառ առ բառ:

Արամ Անտոնյան կնկարագրե այն պահը երր բանտային իշխանությունները պիտի ստուգին բանտ բերվածներու ինքնությունը հատուկ ցուցակի մը վրային:

«Բարձրահասակի, դակադեմ, երկար ու շատ սուր քիթով և տարապայման կերպով նիշար երիտասարդ մըն էր որ մարմարի նստարանի մը կատարը ցցված, ձեռքը զատնրված ցանկերու վրային մեր անունը պիտի կարդար և արձանագրեր թե որո՞նք բախտը ունեցած էին վայելելու իրենց կործանելիք «Հյուրանոց»-ին ասպանջականությունը:

Կոմիտաս մեր մոտն էր, շրջապատված քանի մը անձանոթներե, որոնք տաք վիճարանության մը բռնված էին: Զէինք բարոններ թե ինչի՞ վրա կվիճենին. բայց շատ կաղմէնեին, մինչդեռ պաշտոնյան, հայտնապես սրանհած կոպասեր որ լուսություն գոյանա և բնթերցումը սկսի:

— Սըստ, մնցեց Կոմիտաս, մեկն ու մյուսը ցնցելով. թողեր որ կանչե արագիլը:

Պաշտոնյան իրոք որ արագիլի մը երեւութին ուներ այն բարձունքին վրա ուր թառեր էր:

Մեզի նորեն պատվիրվեցավ, —ինչպես անգամ մը ըրեր էինք, — Բշշատ պեյի մատ, — մեվեուա (ներկա) բառը արտասանել երը մեր անունը կարդացվեր:

Եվ արագիլը սկսավ կոնչել:

Բայց շուտով աղմուկը պիտի սկսեր նորեն, այս անգամ մեր ամենուս բրբիջներով: Պաշտոնյան որ կերեա թե շատ ընտանի չէր հայկական անուններուն, այնքան զավեցական փոփոխություններով կարտասաներ մեզմե ումանց և մեկ քանի բացականերու անունները որ կարելի չէր լուրջ մնալ: Թոլորա այ կինդայինք:

Մարզը սակայն այնտեղվանքը չէր: Յուրաքանչյուր անունի առջե երկար պահ մը կհամենար հեղեղով, հետո հեասպառ աճապարանքով մը կկարդար զայն այնպես ինչպես կրցեր էր բմբոնել, կարծես վախնալով

որ կմոռնա և պետք կծագի վերտափն հեղւ Անշուշտ իր արտասանած անունները մեջ մասամբ ճիշտ էին, կամ շատ քիչ չափով աղավաղված. բայց կարդ մը անուններ բոլորովին այլանդակ ու զժվարիմաց կերպարանափոխությանց կենթարկվելուն: Այսպիս, Հեյզազ Մեռջուրտար, Թիրիքի Հայիդ, Տաղեյեն նեղարմեթ, Միսրին Տորթոր, Ճեշաճեկրի Արթին, Աւտի Երվանդ, և նույնքան ապշեցուցիչ այլակերպությանց առարկա դարձած ուրիշ անուններ իրարու կհաշորդելու, մեր բրբիջներուն շոփնդին մեջ, ու գործ մըն էր գուշակել թե ասոնք անուններն են Միհըրդադատ Հայկազի, Հայկ Թիրյաքյանի, դոկտ. Նազարեթ Տաղավարյանի, դոկտ. Միսրայյանի, Հարություն Ճանկյուղյանի, Երվաճ: Օտանի:

Զրի ներկայացում մըն էր որուն հանդիպատես կըլլայինք այլապես անակնկալ կերպով և որ գոնե սկիզբները շատ զվարմացույ մեզ:

Իմ անունիս բնթերցումնեն ետք ես բաժնվեր լի խումբեն: ...Մեզի վերջեն պատմեցին թե Կոմիտաս ալ իր բաժինը ունեցած էր այդ անվանափոխումներեն: Պաշտոնյան, երբ իշանունին կհամանի, երկար պահ մը կհեցի զայն, — «Ֆում... Տամի... Տոմիրա...», և կերպվա վերցին սին (ս) արարական տառը շփոթելով հիմ (Ճ) և եկ (ի) միացյալ տառերուն հետ, կդուռ շտապով:

— Քոմիրանի բահիպա...
Ինչ որ պարզապես կիշանակեր «Հեղափոխական վարդապետ»:

Ավելցուցին նաև որ Կոմիտաս ցնցվեր է ալդ բոլորովին անսպասելի անվանակոչութենեն, որ անշուշտ բարձայի բան մը չէր այն մինուրտին մեջ ուր կդանվեինք, և շփոթութենեն երկու անդամ՝ «մեվտուն», «մեվտուն» պատասխաներ է փոխանակ «մեվենուա»-ի:

Կոմիտաս սակայն, նույն իսկ շփոթության մեջ, չէր կրնար մոռնալ թուրքերներ որ իրեն, ինչպես իր մանկության շրջանի բոլոր կուտինացիներուն համար մայրենի լեզու եղած էր և վերջեն էջմիածնի մեջ սորված էր հայերենը: Շատ հավանականաբար դիտմամբ շրջած էր «մեվենուա» բառին կազմը, իրը փոխազարձություն իր անունին ալլարպաման: Գիտենք որ կսիրեր կատակել, և կկատակեր ամեն առթիվ, երբեմն բոլորովին անսպասելի պարագաներու մեջ»:

Արամ Անտոնյան կպատմե հետո հացի բաշխութիր, որ այլևս լիվ կհիշեցներ բանտարկյանէրուն թե իրապես բանտն են և զանոնք կլեցներ տիսուր կասկածներով.

«Բայց անոթությունն ալ իր պահանջները ունի, հաճախ ավելի ամբողջ արարական քան ուրիշ ամեն մտահոգություն: Ամեն մարդ առաջ իրեն սահմանված հացը: Տրվածը դիմուրա-

կան սև բայինն էր, զոր շատեր նախընտրեցին Պոլսու սպիտակի հացեն: Թալինները գերտաք էին, դրեր էինք մեր ձախ անութին տակ, և պատառ-պատառ փրցնելով կծամեինք: Միւրդատ Հայիազն, որ բանտի կյանքին ձանոթ էր, կպոռար:

— Օրվան ամբողջ հացն է ասիկա. մաս մը պահեցեք իրիկվան համար:

Կոմիտաս ալ իր հացը անութին տակ առած էր, շրջապատված համակիրներեց, որոնցմենք ոմանք ձիթապտուղ, պանիր, չոր թուզ կամ խաշած հավկիթ ձարեր էին բանտին նպարավաճառեն, և ափերնին լցուն իրեն կերկարեին որպեսովի հացին հետ ուտեալոց հավկվ թե ձեռք մեկնեց անոնց:

Արամ Անտոնյան կշարունակե պատմել. «...Հանկարծ բանտապահները ծանուցին թե արտոնված ենք տուն նամակ գրել, ձեր մակեղեն, անկողին կամ կերակուր բերել աւալու համար:

Անշուշտ այս ծանուցումը բարեգուշակ բան մը չէր. պարզապես հայտնություն մըն էր թե մեր բանտարկությունը կրնար երկար ւեևել. բայց թերես ոչ ոք համեցավ այդ մոււածման վրա Բանտապահները նոր ծանուցմամբ մը հայտնեցին թե պետք էր թղթատարական բաց քառթերու վրա, և լոկ թուր քերեն գրել Արտանված էինք նաև հեռագրելու: Քառթերը գնեցինք իրենցմեն, և ընական է լայնորեն շահագործեցին այս երկնառար առիթը: ...Ամեն մարդ կաճապարեր վայրկան մը առաջ օգտավիլ տրված արտոնութենին: Շատեր սակայն, որոնք թուրքերին բառ մը չէին կրնար գրել, շփոթեր էին, և իրենց զնած քառթը ձեռքբերնին, երանյալ ու տառանյալ կշղչեին այս ու այն ուղղությամբ, անակնկալ օժանդակություն մը սպասելով:

...Զեմ գիտեր թե Կոմիտաս, որ թուրքերն ուստեր բայց չէր կրնար գրել, որո՞ւն օգնության դիմեց: Ենովք Շահեն, որ իր ծանոթներուն կողմեն գրված քառթերը հավաքելով բանտին գրաւենյակը տարած էր, մեզի ըսավ թե Կոմիտասեն ստացավ երկու քառթ, մեկը իր տան հասցեով, ապահովարար Կարապետ վարպետին, և մյուսը ամերիկյան գեսապանատան թարգման պկ. Արշակ Շմավոնյանի: Վարդապետը ծանոթ դեմք մըն էր ամերիկյան գեսապանատան մեջ: ...Անշուշտ Կոմիտաս մեծ հույս դրած էր Շմավոնյանի և անոր միջոցավ ձեռք բերվելիք գեսապանական միջամտության մը վրա, որմեն կակնկայեր իր իրկությունը:

Տարակուսելի է սակայն որ գրված բոլոր առաջերն ալ իրենց հասցեին ժամանեցին. ի հարկե շատերը վար գրվեցան բանտին դրասենյակին մեջ ուր ուշադիր և մանրակրիտ քննության մը առարկա կդառնային նախապես:

Բայց Կոմիտասի հավատքը վառ մնաց ամբողջ օրը, և իրիկվան կողմ, դոկտ. Փազիլ խանի վիճակված անակնկալ բախտավորությունը բոլորովին հուսադրեց զինքը, իրեն հաւ նաև ուրիշ շատեր որոնք նույն նպատակով բառեցեր ուղղեր էին աղդեցիկ անձերու:

Իրիկվան կողմ, մեր վրա ալլապես հուսատու աղդեցություն մը ըրին արձագանքները բուռն ոմբակնության մը որ տեղի կունենար նեղուցներուն առջեն, և որ բնական է չէր կրընար մեզ անտարբեր թողով: Ապահովագույն փրկությունը այդ կողմեն կրնար գալ: Անշուշտ խորհունքներ կային թե կառավարությունը, իր փախուստին օրը, կրնա մեզ ալ միասին թշել գեպի Գոնիա կամ այլուր, բայց կարելի էր հուսալ թե թուրքերը, մայրաքաղաքին անկումեն եար, ալլես չեն շարունակեր պատերազմը, և իրենք ալ, մենք ալ կիրրկվինք:

Կոմիտաս, որ կսիրեր բառեր շինել, «որմբերց» բառը նետեց մերտեղ, թնդանութներու որոտմանց համար, և այս բառը մեծ հաջողություն գտավ: Ոմանք «Ենուածայն» ածականը կցեցին անոր, ակնարկելով օրվան երեք դաշնակիցներուն, Ծուսին, Անգլիոն և Ֆրանսայի, և երկար միջոց մը քիչ մը ամեն մարդ խոսակցության ուրիշ նյութ շունեցավ այլ միայն այդ «Ենուածայն» ոմբերգ»-ը, որու գանգումները հետողենեա գորեղի կհնչեին:

Բանտին պաշտոնատան այն սենյակը որ մեզմեն մմանց հատկացվեր էր նախսրդ գիշերը, միշտ մեր բարմադրության տակ թողդված էր: Դոկտ. Փազիլ խանի մեկնումով հոն բաց տեղ մը կմնար, և Քելեկյանի առաջարկության վրա այդ տեղը հատկացվեցավ Կոմիտաս վարդապետի, որ զիշերը շարունակ դոկտ: Թորգոմյանով զրագվելու հարկադրված, ոչ միայն քիչ էր ընացիք, այլ շատ նեղվեր էր իրեն պես արթուն մնացուներու սիհառաբներու ծովսեն: Եթե օրվան մեծագույն մասը բանտին հրապարակ անցուց, կրնակը տալով այս կամ այն ծառին, սիկառիթներու ծովսեն կարելի եղած չափով հեռու մնալու համար էր:

Կոմիտաս հոգեկան կորով ցուց տվավ, նկարագրի ամրություն՝ իր ձերբակալության պահուն և Պոլս կեղրունական բանտը մնացած կույզ մը օրերուն:

Բժիշկ Վ. Թորգոմյանը որ առհասարակ աղկամկ մարմին և փխրուն հոգի մը ուներ և որ մեկն է եղած ամենեն ավելի ընկճպողներուն, կպատմեն իր հուշերուն մեզ:

«Ապրիլ 11-24-ի վատշվիր զիշերն էր երբ անուշ քունես հանվելով տարվեցա մուսակա ոստիկանատունը և անկե Մեհտերեանեի բանտը, որ տիրող կեղտուությունը և ոչիլներու խուսներամ բազմությունը նկարագրել կարելի չէ... Այդանել տեսա բազում բարե-

կամներ, որոնց ձեռքերը հաղիվ սեղմած՝
սկսա լալ ու մարմրիլ... Ակնունի, Խաժակ,
Միջբղատ Հայկապն, Զարդարյան և ուրիշներ
իդուր կաշխատեին զիս Հանդարտեցնել...
Ծունչս կրոնվեր... Օդի պակասը, մթնոլոր-
տի աղառությունը զիս շափազանց կհու-
զեին երբ աճա ներս մացուցին Կոմիտաս
վարդապետը... Դեմքը ժպտալից, ականողի-
րը հրամայական, շիտակ քովս եկավ ու իր
զոռ ձայնով՝ «Չե՞ս ամաչեր» ըսավ... Այդ
բառերը ալեկոծ սրտիս վրա շգիտեմ ինչու
բան մը սրսկեցին մեղմարար ու ես ինկա ա-
նոր կուրծքին վրա... լալով՝ միշտ լալով,
այնքան հոն արցունքներ թափելով որ

վարդապետին կուրծքը թրջելու աստիճանին
եղա... Ան կշոյեր ճակատս, թերուն մեջ զիս
կսեղմեր ու կզգայի թե իրմեն բան մը հիս
կներարկվեր, ույժ մը, տեսակ մը էլեկարա-
կանություն որ կենդանարար աղդեցություն
մը կներգործեր վրաս և առանց ատոր... զու-
ցե բոլորովին շքանայի»³:

Ու պահն է արդեն որ ճամփա ելենք Կոմի-
տասին հետ. գեռ շգիտենք թե ուր կերթանք,
երբ ձերակալվածները կհանեն բանտեն ու
շոգենավ կտանին զիշերանց:

³ «Հառաջ», 1935 հոկտ. 27, թիվ 2946:

(Շարունակելի)